3.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում,Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր 241.5 քմ մակերեսով ինքնակամ բնակելի տան օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1422 ՀՀ դրամ՝ ընդամենը 343413 ՀՀ դրամ / երեք հարյուր քառասուներեք հազար չորս հարյուր տասներեք / ՀՀ դրամ.:

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի, 04-001-0275-0022 կադաստրային ծածկագրում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023PCQYWB:

5.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբեր 12
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1126-Ա

ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Նորոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը և Անահիտ Գևորգյանի 24.08.2023 թ. թիվ 4833 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անահիտ Գևորգյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մաշտոցի փողոց 60ա հասցեում գտնվող գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք Լենինականյան թաղամաս 60/1:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբեր 12
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2023 թվականի N 1127-Ա

ԾԱՌ ՀԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Դ. Ավետիսյանի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 5167 զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Թույլատրել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինությանը հատել Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Շահումյան փողոցի Չարենց - Նալբանդյան հատվածի թվով 16 հատ ծառերը՝ ըստ նախագծի շինարարական աշխատանքները կատարելու համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինության տնօրեն Արմեն Հարությունյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ. սեպտեմբերի 12
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1128-Ա

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 217-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիր համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 1-ի թիվ 206 կարգադրությամբ ստեղծված Արմավիր համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու նպատակով ստեղծված մշտական հանձնաժողովի, 2023 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 5168 և թիվ 5170 եզրակացությունները, ընդառաջելով Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հանրապետության 35 շենքի 8/2 բնակարանի բնակիչ Սիրանուշ Գևորգի Մովսիսյանի, Հացիկ գյուղի 16 փողոցի 26 շենքի 2 բնակարանի բնակիչ Դավիթ Հովսեփի Մաթևոսյանի, Հացիկ գյուղի 17 փողոցի 1 փակուղի 2 բնակարանի բնակիչ Հրաչիկ Մաթևոսի Վարդանյանի, Լուկաշին գյուղի 4-րդ փողոցի 22 տան բնակչուհի Ագրաֆինա Աշոտի Խոշբեկյանի օգնության դիմումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Արմավիր համայնքի բյուջեի 10 բաժնի 07 խմբի 01 դասի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի ծախսերի 4729 հոդվածից 20.0 հազար դրամ օգնություն հատկացնել՝ Սիրանուշ Գևորգի Մովսիսյանին, 50.0 հազարական դրամ՝ Դավիթ Հովսեփի Մաթևոսյանին ,Հրաչիկ Մաթևոսի Վարդանյանին և Ագրաֆինա Աշոտի Խոշբեկյանին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 13
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1129-Ա

«ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒԿԱՇԻՆ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի 2023Թ. ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 26.12.2022թ. թիվ 217-Ն որոշման 8-րդ կետով և հիմք ընդունելով «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի 13.09.2023թ. թիվ 5184 զեկուցագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» 4267 հոդվածի սննդի գնման արդյունքում խնայված գումարներից պակասեցնել 130.0 հազար դրամ և ավելացնել «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածին՝ մանկապարտեզի երեխաների հիգենայի նորոգված սենյակի համար դուռ և պատուհան ձեռք բերելու համար:

2. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 14
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023 թվականի N 1130

ՕՎՍԱՆՆԱ ՌԱԶՄԻԿԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2022թ. ապրիլի 14/ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022 թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Օվսաննա Ռազմիկի Աղաջանյանի 29.08.2023 թ. թիվ 4919 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Օվսաննա Ռազմիկի Աղաջանյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղ 04-059-012-006 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Սարդարապատ գյուղ 36-րդ փողոց 9 հողամաս:
2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. Սեպտեմբերի 14
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1131

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 26.12.2022թ. թիվ 217-Ն որոշման 8-րդ կետով, հիմք ընդունելով 04.09.2023թվականի թիվ ՓԴ 02-23, թիվ ՓԴ 03-23 և թիվ ՓԴ 04-23, պայմանագրերը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 01 բաժնի 6 խմբի 1 դասի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրի համայնքապետարանի ծախսերի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» 4239 հոդվածի պլանը պակասեցնել 4600,0 հազար դրամով, «Հատուկ նպատակային այլ նյութեր» 4269 հոդվածի պլանը պակասեցնել 1400,0 հազար դրամով և ավելացնել 6000,0 հազար դրամ «Այլ կապիտալ դրամաշնորհներ» 4657 հոդվածի պլանին, «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ-ին Հացիկ գյուղի, Սարդարապատ գյուղի և Արմավիր քաղաքի Սայաթ-Նովա 6ա շենքի հարակից տարածքում ֆուտբոլի խաղադաշտերի ամբողջ երկայնքով երկաթյա ցանկապատ կառուցելու համաֆինանսավորման համար:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2023թ. բյուջեի և ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 14
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023 թվականի N 1132-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՎԵՏԻՍ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի 1-ին կետով, 167-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Սարդարապատի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ավետիս Նիկողոսյանի 2023 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 5194 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության «Սարդարապատի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ավետիս Նիկողոսյանին տրամադրել 2022 թվականի ամենամյա արձակուրդի չօգտագործված 20 աշխատանքային օրերը՝ 2023 թվականի սեպտեմբերի 18-ից:
2.Նշված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության «Սարդարապատի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ավետիս Նիկողոսյանի պարտականությունները վերապահել Հայաստանի Հանրապետության «Այգեվանի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Խաչիկ Նիկողոսյանին:
3.Ավետիս Նիկողոսյանին՝ աշխատանքի ներկայանալ 2023 թվականի հոկտեմբերի 17-ին:
4.Հայաստանի Հանրապետության «Սարդարապատի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվապահին՝ ի գիտություն:
5.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 14
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1133-Ա

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 06-Ի ԹԻՎ 295-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հարություն Խաչատրյանի և Հովիկ Աբելյանի լիազորված անձ՝ Սամվել Բաղալյանի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 05-ին Արմավիրի համայնքապետարան մուտքագրված թիվ 5028 դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անվավեր ճանաչել Արմավիր համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 06-ի «Հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» թիվ 295-Ա որոշումը:
2. Հանձնարարել՝ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ Հարություն Խաչատրյանի և Հովիկ Աբելյանի լիազարված անձ՝ Սամվել Բաղալյանի կողմից 2023 թվականի փետրվարի 06-ին՝ N 230206165706054 անդորրագրով Արմավիրի համայնքապետարանի 900335201142 հաշվեհամարին փոխանցված 1264956 (մեկ միլիոն երկու հարյուր վաթսունչորս հազար ինը հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ գումարը հետ վերադարձնել:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ.սեպտեմբեր 14
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1134-Ա

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 06-Ի ԹԻՎ 294-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հարություն Խաչատրյանի և Հովիկ Աբելյանի լիազորված անձ՝ Սամվել Բաղալյանի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 05-ին Արմավիրի համայնքապետարան մուտքագրված թիվ 5029 դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անվավեր ճանաչել Արմավիր համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 06-ի «Հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» թիվ 294-Ա որոշումը:
2. Հանձնարարել՝ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ Հարություն Խաչատրյանի և Հովիկ Աբելյանի լիազարված անձ՝ Սամվել Բաղալյանի կողմից 2023 թվականի փետրվարի 06-ին՝ N 230206165322054 անդորրագրով Արմավիրի համայնքապետարանի 900335201142 հաշվեհամարին փոխանցված 11.300 (տասնմեկ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ գումարը հետ վերադարձնել:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ.սեպտեմբեր 14
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1135-Ա

ԱՌԵՎՏՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՌԳՐԱՎԵԼՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու կամ առանց համապատասխան թույլտվության իրականացված բացօթյա առևտրի դեպքում կիրառել առևտրի իրականացման և ծառայությունների մատուցման առարկաների առգրավում:

2.Առգրավելու իրավասությունը վերապահել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Բյուջետային եկամուտների հաշվառման, հավաքագրման և տրանսպորտի վերահսկողության բաժնի առաջատար մասնագետ Արամ Հովհաննիսյանին և առաջին կարգի մասնագետներ Սամվել Գալստյանին և Սամվել Սիմոնյանին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ.սեպտեմբերի14

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբերի 2023 թվականի N 1136-Ա

ՆԱԴԵԺԴԱ ՍՈՒՐԵՆԻ ՄՈՎՍԵՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2022թ. Ապրիլի 14/ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Նադեժդա Սուրենի Մովսեսյանի 06.09.2023թ. թիվ 5060 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Նադեժդա Սուրենի Մովսեսյանին պատկանող Հայաստան ի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Հացիկ գյուղի 04-058-0018-0019 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Հացիկ գյուղ 4-րդ փողոց 32/3:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. Սեպտեմբերի 15
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1137-Ա

ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ , 49-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022 թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստի 006-Ա որոշում, Գագիկ Գրիգորյանի 12.09.2023 թ. թիվ 5141 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Գագիկ Գրիգորյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-016-0016-0036 կադաստրային ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արաքս գյուղ, Վ.Ալիխանյան փողոց 1:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ.սեպտեմբեր 15
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1138-Ա

ՌՈԼԱՆԴ ԵՆՈՔՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Նորոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով1և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Ռոլանդ Ենոքյանի 28.08.2023թ. թիվ 4902 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ռոլանդ Ենոքյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղ 04-059-0055-0005 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Սարդարապատ գյուղ 9-րդ փողոց 43:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ.սեպտեմբեր 15
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2023 թվականի N 1139-Ա

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, ըստ22.12.2017թ. ժառանգության վկայագրի և Հովհաննես Ներսիսյանի 07.09.2023.թ թիվ 5097 դիմումը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հովհաննես Ներսիսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղի գյուղում /վկայական թիվ0198623/ գտնվող գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Լենուղի, 11-րդ փողոց, 1:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. Սեպտեմբերի 15
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1140-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 92 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԵՎ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետությանկառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ 4-րդ կետով ,հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հ.Ավետիսյան փողոց 92 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշում, Արսեն Խաչատրյանի 07.08.2023թ թիվ 4523 դիմումը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Արսեն Խաչատրյանի /ծնված 07/06/1972թ./ և Արամայիս Առաքելյանի /ծնված 10/06/1951թ./ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հ.Ավետիսյան փողոց 92 հասցեում գտնվող գույքային միավորների՝ 515.0 քմ օրինական հողամասի վրա

1970թ.. և 1998թ. կառուցված 109.5 քմ մակերեսով բնակելի տան, 1980թ. կառուցված 8.2 քմ մակերեսով սանհանգույցի և 1998թ. կառուցված 9.9քմ մակերեսով ծածկի նկատմամբ:

3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ.սեպտեմբեր 15
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1141-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> 600-Ն որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատվածկարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ դեկտեմբերի 5-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ա որոշումը,Վարազդատ Մելիքյանի 03.08.2023թ. թիվ 4421 դիմում

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վարազդատ Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքնի Արմավիր քաղաքում 108 թաղամաս 72 հասցեում գտնվող գույքային միավորների՝ 600.0 քմ օրինական հողամասի վրա 1995 թ. կառուցված 208.0 քմ ներքին մակերեսով և 313.3 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:

2. ՀՀ Կառավարության 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

3.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք 108 թաղամաս 72 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023V2U5I5:

5.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ.սեպտեմբեր 15
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2023 թվականի N 1142-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՔԻ ԼՈՒԿԱՇԻՆ ԳՅՈՒՂ, Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ , 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՄԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԱՎԵԼ ՀՈՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ԱրմավիրարզիԱրմավիր համայնքի ավագանու 2021 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 126-Ն որոշումը և Արմեն Մանուկյանի 09.08.2023 թ. թիվ 4562 դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2023թ. փետրվարի 23/ և հաշվիառնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Սահմանապահների փողոց 45 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արմեն Մանուկյանին / ծնված՝ 02.01.1983թ./պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղում գտնվող 04-047-0035-0001 կադաստրային ծածկագրով 1100.0 քմ մակերեսով տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 220.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրանց՝ սեփականության իրավունքով, իսկ 238.0 քմ հողամասն օտարել ուղիղ վաճառքի միջոցով,

[illegible] կադաստրային արժեքի 30 %-ի չափով՝ 1 քմ հողամասի համար՝ 154.44 ՀՀ դրամ, [illegible] 36757 / երեսունվեց հազար յոթ հարյուր հիսունյոթ/ դրամ:

[illegible]գնել Արմեն Մանուկյանին /ծնված՝ 02.01.1983թ./ պատկանող Հայաստանի [illegible]պետության Արմավիրիմարզի Արմավիր համայքնի Լուկաշին գյուղում 04-047-0035-[illegible] կադաստրային ծածկագրով գույքային միավորների՝ 1558.0 հա օրինական հողամասի [illegible] 1956թ.և 1976թ. Կառուցված 147.6 քմ մակերեսով բնակելի տան, 1959թ. կառուցված 14.2 քմ մակերեսով նկուղի, 1976թ. կառուցված 9.9 քմ մակերեսով թոնրատան, 1976թ. կառուցված 8.3 մակերեսով խորդիանոցի, 1976թ. կառուցված 12.1քմ մակերեսով հավաբնի, 1998թ. կառուցված 21.5 քմ մակերեսով ծածկի նկատմամբ, իսկ բնակելի տան մի մասը 27.2 քմ մակերեսով, անասնաշենքը և պարիսպը համարել ինքնակամ:

3.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Արմեն Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայքի Լուկաշին գյուղի 04-047-0035-0001 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզ, Արմավիր համայք, Լուկաշին գյուղ, Հ.Ավետիսյան փողոց 4:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

6.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. Սեպտեմբերի 15
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2023 թվականի N 1143-Ա

ԱՆԴՐԱՆԻԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2022թ. Ապրիլի 14/ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Անդրանիկ Վարդանյանի 15.09.2023թ. թիվ 5224 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Անդրանիկ Վլադիմիրի Վարդանյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Մյասնիկյան գյուղ 04-066-0046-0015 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ,Արմավիր համայնք, Մյասնիկյան գյուղ, Կոմիտասի փողոց, 24 հողամաս:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ. Սեպտեմբերի 15
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2023 թվականի N 1144-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱԵԼՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ հոդվածներով, 161-րդ հոդվածի 2-րդ մասով, 162-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1384-Ն որոշման 18.1-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղի վարչական ղեկավար Արթուր Միքաելյանի 2023 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 5223 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղի վարչական ղեկավար Արթուր Միքաելյանին 2023 թվականի սեպտեմբերի 18-ից տրամադրել 2022 թվականի ամենամյա արձակուրդի չօգտագործված 9 (29.12.2021թ. - 29.12.2022թ. ժամանակահատվածի համար) և 2023 թվականի ամենամյա արձակուրդի 10 (6 նվազագույն և 4 լրացուցիչ) աշխատանքային օրերը (29.12.2022թ. - 29.12.2023թ. ժամանակահատվածի համար):

2.Արթուր Միքաելյանին՝ աշխատանքի ներկայանալ 2023 թվականի հոկտեմբերի 16-ին:

3.Նշված ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան գյուղի վարչական ղեկավար Արթուր Միքաելյանի պարտականությունները վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի վարչական ղեկավար Գևորգ Զեյնալյանին, իսկ NISSAN X-TRAIL 2.0 մակնիշի 098 CM 61 պետհամարանիշի ծառայողական ավտոմեքենան տրամադրել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Յուրիկ Աբգարյանին:

4.Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ ի գիտություն:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 15
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1145-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԾԱԾԿՈՑՆԵՐՆ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ապամոնտաժել Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Շահումյան փողոցի Չարենց-Նալբանդյան հատվածի մայթերի վրա կառուցված ծածկոցները՝ շինարարական աշխատանքները անխոչընդոտ իրականացնելու և շինությունների ճարտարապետական և գեղագիտական տեսքը ապահովելու նպատակով:

2.Հանձնարարել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Բարեկարգում» տնօրինությանը՝ ապահովել քանդման աշխատանքները և ապամոնտաժել ծածկոցները:

3.Առաջարկել Արմավիրի ոստիկանության բաժնին, սույն որոշման 2-րդ կետը կիրառելու ընթացքում համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

4.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնին:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ.սեպտեմբերի 18
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2023 թվականի N 1146-Ա

ԱՐՄԵՆ ՍԱՄՎԵԼԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2022թ. Ապրիլի 14/ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Արմեն Մանուկյանի 24.08.2023թ. թիվ 5192 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արմեն Սամվելի Մանուկյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Լուկաշին գյուղ 04-047-0028-0002 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Լուկաշին գյուղ Հ. Ավետիսյան փողոց, 8-րդ նրբանցք, 14 հողամաս:
2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:
4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. Սեպտեմբերի 18
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1147-Ա

ԱՐՏԱԿ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Նորոշմամբ հաստատված կարգի 45-րդ և 46-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2021թ. դեկտեմբերի 27-ի թիվ 126-Ն որոշումը, Արտակ Սաղաթելյանի լիազորված անձ Գայանե Մանուկյանի 15.09.2023 թ. թիվ 5166 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արտակ Սաղաթելյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գտնվող /սեփականության վկայական 2432688 / գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Արմավիր քաղաք Ա.Մյասնիկյան փողոց 5-րդ նրբանցք 18/1:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբեր 18
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2023 թվականի N 1148-Ա

ԳԱԳԻԿ ԱՐՇԱԿԻ ՕՀԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2022թ. Ապրիլի 14/ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Գագիկ Օհանյանի 14.09.2023թ. թիվ 5196 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Գագիկ Արշակի Օհանյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Լենուղի գյուղ 04-044-019-014 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Լենուղի գյուղ 2-րդ փողոց 8 տուն:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. Սեպտեմբերի 18
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 սեպտեմբերի 2023 թվականի N 1149-Ա

ՎԱԼԵՐԻ ՇԱՀԻՍՄԱՀԻԼԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2022թ. Ապրիլի 14/ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Վալերի Մանուչարյանի 12.09.2023թ. թիվ 5160 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վալերի Մանուչարյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Լուկաշին գյուղ 04-047-0004- կադաստրային ծածկագրից 0.12 հա գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Լուկաշին գյուղ 8-րդ փողոց, 26/1 հողամաս:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. Սեպտեմբերի 18
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1150-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇԽԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով, /ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 2023 թվականի օգոստոսի 28/ և Աշխեն Մաթևոսյանի 07.09.2023թ. թիվ 5096 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Աշխեն Մաթևոսյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հ.Բաղրամյան Գ թաղամաս 25 հասցեում գտնվող / կադաստրային ծածկագիր 04-001-0117-0007/ 0.04 հա մակերեսով տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 0.0023 հա մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան՝ սեփականության իրավունքով:

2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբեր 19
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1151-Ա

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԵՎ ԹԱՄԱՐԱ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ կետով, 10-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով, Արմավիր համայնքի գլխավոր հատակագծով՝ Տիգրան Գալստյանի 09.06.2023թ. թիվ 3510 դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տիգրան Գալստյանին և Թամարա Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հ.Բաղրամյան փողոց 11/2 հասցեում գտնվող 0.00305 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել հասարակական կառուցապատման:

2. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբեր 19
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 սեպտեմբերի 2023 թվականի N 1152-Ա

ԱՐԹՈՒՐ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ, ՄԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ, ԳՈՀԱՐ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ, ԳԱԳԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ, ԳԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2022թ. Ապրիլի 14/ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Արթուր Մինասի Սահակյանի 15.09.2023թ. թիվ 5207 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արթուր Սահակյանին, Մարինե Սահակյանին, Գոհար Սահակյանին, Գագիկ Սահակյանին, Գարիկ Սահակյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Մայիսյան գյուղ 04-043-030-015 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մայիսյան գյուղ 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, 6 հողամաս:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. Սեպտեմբերի 19
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2023 թվականի N 1153-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի քաղաքային համայնքի ղեկավարի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 431-Ա որոշմամբ՝ Արմավիր քաղաքի Չարենցի փողոցի 5 շենքին կից թիվ 5 ավտոտնակ ժամանակավոր հասցեում գտնվող 19.95 (տասնինն ամբողջ իննսունհինգ) քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով 3 (երեք) տարի ժամկետով հատկացվել է քաղաքացի Լիլիթ Ենոքյանին, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և քաղաքացի Լիլիթ Ենոքյանի միջև 2012 թվականի հոկտեմբերի 25-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ /սեղ. նո 6356/:

Հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը լրացել է:

Քաղաքացի Լիլիթ Ենոքյանը մինչ օրս բարեխղճորեն և լրիվ ծավալով կատարել է իր՝ կառուցապատողի պարտականությունները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 441-րդ, 466-րդ, 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի քաղաքային համայնքի և քաղաքացի Լիլիթ Ենոքյանի միջև 2012 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի 9.1 կետն, ընդառաջելով քաղաքացի Լիլիթ Ենոքյանի 2023 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 5258 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի քաղաքային համայնքի և Լիլիթ Ենոքյանի միջև 2012 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում՝ /սեղ.նո 6356/ կատարել փոփոխություններ.

1) Հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 25.10.2026 թվականը:

2) Պայմանագրի 5.1 կետում նշված կառուցապատման իրավունքի տարեկան վճար՝ «1000 (մեկ հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «12000 (տասներկու հազար)» բառերը:

[illegible]անական բաժնին՝ քաղաքացի Լիլիթ Ենոքյանի հետ կնքել համաձայնագիր՝ 2012 [illegible]ի հոկտեմբերի 25-ին՝ /սեղ. նո 6356/ կնքված հողամասի կառուցապատման [illegible]ի տրամադրման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին:
[illegible]ն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 20
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2023 թվականի N 1154-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 13-ի թիվ 334-Ա որոշմամբ՝ Արմավիր քաղաքի Երևանյան փողոցի թիվ 2 տաղավար ժամանակավոր հասցեում գտնվող 20.5 (քսան ամբողջ հինգ տասնորդական) քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով 3 (երեք) տարի ժամկետով հատկացվել է քաղաքացի Վիլիկ Խաչատրյանին, համաձայն որի Արմավիրի քաղաքային համայնքի և Վիլիկ Խաչատրյանի միջև 2010 թվականի մայիսի 17-ին կնքվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր՝ /սեղ. նո 2629/:

Հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետը լրացել է:

Քաղաքացի Վիլիկ Խաչատրյանը մինչ օրս բարեխղճորեն և լրիվ ծավալով կատարել է իր՝ կառուցապատողի պարտականությունները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 441-րդ, 466-րդ, 468-րդ հոդվածների 1-ին մասերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի քաղաքային համայնքի և քաղաքացի Վիլիկ Խաչատրյանի միջև 2010 թվականի մայիսի 17-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի 9.1 կետն, ընդառաջելով քաղաքացի Վիլիկ Խաչատրյանի 2023 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 5263 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի քաղաքային համայնքի և քաղաքացի Վիլիկ Խաչատրյանի միջև 2010 թվականի մայիսի 17-ին կնքված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում՝ /սեղ.նո 2629/ կատարել փոփոխություններ.

1) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի գործողության ժամկետն երկարացնել մինչև 17.05.2028 թվականը:

2) Պայմանագրի 1.1 կետում «3000 (երեք հազար)» բառերի փոխարեն կարդալ՝ «12000 (տասներկու հազար)» բառերը:

3) Պայմանագրի 5.1 կետում նշված կառուցապատման իրավունքի տարեկան վճարը կազմում է «61500 (վաթսունմեկ հազար հինգ հարյուր)» բառերի փոխարեն կարդալ՝ «276000 (երկու հարյուր յոթանասունվեց հազար)» բառերը:

2. Իրավաբանական բաժնին՝ քաղաքացի Վիլիկ Խաչատրյանի հետ կնքել համաձայնագիր՝ 2010 թվականի մայիսի 17-ին՝ /սեղ. նո 2629/ կնքված համայնքային սեփականություն հանդիսացող

...ասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրում փոփոխություններ ...արելու մասին:

...ումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023թ. սեպտեմբերի 20
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 սեպտեմբերի 2023 թվականի N 1155-Ա

ՊԱՐԳԵՎ ՀԱՍՐԱԹՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Ս. Շահումյան փողոց 9/33 հասցեում իրավախախտող Պարգև Հասրաթյանի կողմից շինությունը /պարիսպ/ քանդելու համար տուգանք նշանակելու մասին, պարզեց որ.

Պարգև Հասրաթյանը խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի, իրականացրել է առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում (այսուհետ՝ քանդում), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, ինչի կապակցությամբ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետի 04.09.2023թ. արձանագրության և 04.09.2023թ. թիվ 5019 զեկուցագրի հիման վրա 2023 թվականի սեպտեմբերի 13-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Արմավիրի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, որին ներկա չի եղել իրավախախտող Պարգև Հասրաթյանը:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Արմավիր համայնքի վարչական սահմաններում ապօրինի շինարարությունները կանխարգելելու նպատակով հերթական ուսումնասիրության /շրջայցի/ ժամանակ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման

Տնի աշխատակիցների կողմից Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Ս. Շահումյան փողոց 9/33 հասցեում առանց թույլտվության շինությունը քանդելու մասին 04.09.2023թ. կազմված արձանագրությունը:

Վարչական հանձնաժողովի 13.09.2023թ. թիվ 16/23 արձանագրությունը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Պարգև Հասրաթյանի կողմից Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Ս. Շահումյան փողոց 9/33 հասցեում առանց համապատասխան թույլտվության՝ կատարվել են քանդման աշխատանքներ՝ քանդվել է պարիսպ սրբատաշ տուֆ քարից, h=2,2մ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2023 թվականի սեպտեմբերի 04-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով, Արմավիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի սեպտեմբերի 13-ին կայացել է վարչական վարույթի նիստ, որին չի մասնակցել իրավախախտող Պարգև Հասրաթյանը:

Արդյունքում հանձնաժողովը արձանագրություն է կազմել և առաջարկել՝ իրավախախտող Պարգև Հասրաթյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով՝ 500000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

Նախազգուշացնել Պարգև Հասրաթյանին, որ համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո, եթե շարունակվի իրականացվել կառույցի քանդման աշխատանքները, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկից երկու հազար հինգ հարյուրապատիկի չափով՝ 2000000-2500000 /երկու միլիոնից - երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ

սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը.

Տվյալ պարագայում Պարգև Հասրաթյանը Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Ս. Շահումյան փողոց 9/33 հասցեում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի /քանդման թույլտվության/, իրականացրել է քանդման աշխատանքներ՝ քանդել է պարիսպ սրբատաշ տուֆ քարից, h=2,2մ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ կամ առանց թույլտվության քանդում կամ ապամոնտաժում իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 44-րդ հոդվածով, և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 13.09.2023թ. թիվ 16/23 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Իրավախախտող Պարգև Հասրաթյանի նկատմամբ նշանակել տուգանք Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Ս. Շահումյան փողոց 9/33 հասցեում առանց թույլտվության քանդման աշխատանքներ իրականացնելու համար 500.000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

1)Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900335201498 հաշվեհամարին՝ ստացող Արմավիր համայնք:

2.Իրավախախտող Պարգև Հասրաթյանին տալ պարտադիր ցուցում՝ դադարեցնել քանդման աշխատանքները և վերականգնել պարիսպը:

3.Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ

...չական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ...ի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Իրավախախտող Պարգև Հասրաթյանին նախազգուշացնել, որ համայնքի ղեկավարի որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո, եթե շարունակվի իրականացվել կառույցի քանդման աշխատանքները, ապա համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ կետի՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկից երկու հազար հինգ հարյուրապատիկի չափով՝ 2000000 -2500000 /երկու միլիոնից- երկու միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ գումարով:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշոփվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023թ.սեպտեմբերի 20
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2023 թվականի N 1156-Ա

ՆԱՐԵԿ ԵՐԱՆՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Ս. Շահումյան փողոց թիվ 3 հասցեում Նարեկ Երանոսյանի կողմից ապօրինի շինարարության հետևանքները վերացնելու մասին, պարզեց որ.

Նարեկ Երանոսյանը խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանած պահանջները, առանց համապատասխան թույլտվության, իրականացրել էր ապօրինի շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, ինչի կապակցությամբ Արմավիրի համայնքապեարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետի 09.08.2023թ. թիվ 4548 զեկուցագրի և կից արձանագրության հիման վրա 2023 թվականի օգոստոսի 9-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Արմավիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի սեպտեմբերի 15-ին հրավիրվել է վարչական վարույթի նիստ, որի մասին ծանուցումը իրավախախտող Նարեկ Երանոսյանին հանձնվել է փոստային առաքման միջոցով /հիմք՝ 26.08.2023 թվականի թիվ AL0110759416AM հետադարձ փոստային առաքանին/:

ստին ներկա իրավախախտող Նարեկ Երանոսյանը տեղեկացրել է, որ վերացրել է իրավախախտման հետևանքները և ներկայացրել է լուսանկարներ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետի կողմից Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Ս. Շահումյան փողոց թիվ 3 հասցեում ապօրինի շինարարություն կատարելու մասին 09.08.2023թ. կազմված արձանագրությունը և 09.08.2023թ. թիվ 4548 զեկուցագիրը:

Վարչական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 17/23 արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Ս. Շահումյան փողոց թիվ 3 հասցեում ապօրինի շինարարական աշխատանքներ իրականացրած Նարեկ Երանոսյանը վերացրել է իրավախախտման հետևանքները՝ քանդել և ապամոնտաժել է ինքնակամ կառուցած ջրահեռացման ցանցը:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում էդրանց հետևանքների վերացումը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի <<ա>> կետի համաձայն՝ անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի

հանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու նպատակությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետի, և հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 15.09.2023թ. թիվ 17/23 արձանագրությունը, Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետի 09.08.2023 թվականի թիվ 4548 զեկուցագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նարեկ Երանոսյանի նկատմամբ 2023 թվականի սեպտեմբերի 15-ին հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշոփվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 22
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2023 թվականի N 1157-Ա

ԱՐՏԱՇ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հ. Բաղրամյան փողոց 27 շենք, 47 տարածքի դիմաց Արտաշ Առաքելյանի կողմից ապօրինի շինարարության հետևանքները վերացնելու մասին, պարզեց որ.

Արտաշ Առաքելյանը խախտելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի սահմանած պահանջները, առանց համապատասխան թույլտվության, իրականացրել էր ապօրինի շինարարական աշխատանքներ (այսուհետ՝ ինքնակամ կառույց), որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, ինչի կապակցությամբ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետի 07.08.2023թ. թիվ 4522 զեկուցագրի և կից արձանագրության հիման վրա 2023 թվականի օգոստոսի 8-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Արմավիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի սեպտեմբերի 15-ին հրավիրվել է վարչական վարույթի նիստ, որի մասին ծանուցումը իրավախախտող Արտաշ Առաքելյանին հանձնվել է փոստային առաքման միջոցով/հիմք՝ 19.08.2023 թվականի թիվ AL0110759466AM հետադարձ փոստային առաքանին/:

...ստին ներկա իրավախախտող Արտաշ Առաքելյանը տեղեկացրել է, որ վերացրել է իրավախախտման հետևանքները և ներկայացրել է լուսանկարներ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետի կողմից Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հ. Բաղրամյան փողոց 27 շենք, 47 տարածքի դիմաց ապօրինի շինարարություն կատարելու մասին 07.08.2023թ. կազմված արձանագրությունը և 07.08.2023թ. թիվ 4522 զեկուցագիրը:

Վարչական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 18/23 արձանագրությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Հ. Բաղրամյան փողոց 27 շենք, 47 տարածքի դիմաց ապօրինի շինարարական աշխատանքներ իրականացրած Արտաշ Առաքելյանը վերացրել է իրավախախտման հետևանքները՝ քանդել և ապամոնտաժել է ինքնակամ կառուցած մետաղական կարկասով տաղավարը:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում էդրանց հետևանքների վերացումը:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի <<ա>> կետի համաձայն՝ անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի

հանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու նպատակով, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետի, և հիմք ընդունելով Արմավիրի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի 15.09.2023թ. թիվ 18/23 արձանագրությունը, Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետի 07.08.2023 թվականի թիվ 4522 զեկուցագիրը.

ՈՐՈՇՈՒՄԵՄ

1. Արտաշ Առաքելյանի նկատմամբ 2023 թվականի սեպտեմբերի 15-ին հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշոփվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 22
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1158-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔ Գ.ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՓՈՂՈՑ 34 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԵՎՈՐԳ ՀԱԿՈԲԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,Հայաստանի Հանրապետությանկառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 11-րդ կետերով և 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ 4-րդ կետով ,հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք 04-001-0272-0043 կադաստրային ծածկագրով հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ հունվարի 17-ի թիվ 01 արտահերթ նիստ 006-Ա որոշում և ինքնակամ կառույցն իրականացրած անձի՝ Գևորգ Հակոբի Պետրոսյանի 13.07.2023թ. թիվ 4085 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Գևորգի Հակոբի Պետրոսյանին /ծնված՝ 25.09.1968/ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքում գտնվող 04-001-0272-0043 կադաստրային ծածկագրով՝ 418.0 քմ օրինական հողամասի վրա 1978թ.կառուցված 209.6 քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ:

3. Գևորգի Հակոբի Պետրոսյանին պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Գ.Լուսավորիչ փողոց 34 հասցեում գտնվող 418.0քմ մակերեսով բնակելի կառուցապատման տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված ծածկը՝ 18.7 քմ մակերեսով և պարիսպները՝ 2.1 քմ մակերեսով ճանաչել օրինական:

4.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր արտաքին 20.8 քմ մակերեսով ինքնակամ օժանդակ շինությունների օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1422.0 ՀՀ դրամ ընդհանուր 29578 (քսանիններ հազար հինգ հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ օրինկանացման վճար:

6.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաք Գ.Լուսավորիչ փողոց 34 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023SRJR6G:

7. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ

2023 թ. սեպտեմբեր 22
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 սեպտեմբերի 2023 թվականի N 1159-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 1123-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 20/09/2023թ. ՆԿ-20092023-4-0211 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 1123-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)Որոշման 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությունը «8.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնք Այգեվան գյուղում գտնվող 04-062-0013-0008 կադաստրային ծածկագրով գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 20233AW3JU:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 22
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թվականի N 1160-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետուպթյան Արմավիրի մարզի Արմավիր համայք Արմավիր քաղաքի Երևանյան փողոցի թիվ 1/17 ավտոտեխսպասարկման կետի հարևանությամբ գտնվող 71.28 քմ բնակավայրերի այլ հողամասում կառուցված 71.28 քմ ընդհանուր արտաքին մակերեսով և 60.1 քմ ներքին մակերեսով /մեկ հարկանի/ ինքնակամ կառույցի /ավտոտեխսպասարկման կայան/ պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցը համապատասխանում է հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիականօրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին մասով, 188-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի հ. 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 34 կետով, 35-րդ կետի <<բ>> ենթակետով, 35,1-րդ , 36-րդ կետերով, ՀՀ կառավարության 2011 թվականի թիվ 1920-Ն որոշման 24 կետի 3-րդ ենթակետով,հիմք ընդունելով կառույցն ինքնակամ իրականացրած ֆիզիկական անձ Մանվել Ֆիդանյանի 01.06.2023 թ. թիվ 3362 դիմումը և դրան կից ներկայացրած փաստաթղթերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող՝ Երևանյան փողոցի թիվ 1/17 ավտոտեխսպասարկման հարևանությամբ գտնվող 71.28 քմ ընդհանուր արտաքին մակերեսով և 60.1 քմ ներքին մակերեսով բնակավայրերի այլ հողամասում Մանվել Ֆիդանյանի կողմից կառուցված 71.28 քմ ընդհանուր արտաքին մակերեսով և 60.1 քմ ներքին

մակերեսով ինքնակամ կառույցը/ ստորև նաև գույք / համարել Արմավիր համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական (կցվում է հողամասի հատակագիծն ու շինության բնութագիրը):

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի սեփականություն հանդիսացող՝ Երևանյան փողոցի թիվ 1/17 ավտոտեխսպասարկման հարևանությամբ գտնվող 71.28 քմ մակերեսով բնակավայրերի այլ հողերի գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրերի հասարարակական կառուցապատման:

3. Գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ,Արմավիր համայնք,Արմավիր քաղաք Երևանյան փողոց 1/19:

4.Գույքի նկատմամբ պետական գրանցում կատարելուց հետո գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքի ձևով ձեռք բերելու առաջարկ կատարել կառույցն իրականացրած Մանվել Ֆիդանյանին:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:

6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Երևանյան փողոցի 1/19 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման)տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023QXNP5J:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. սեպտեմբեր 22
ք. Արմավիր